Տնտեսական աճ և արտաքին առևտուր

Ռեսուրսների պաշարի ընդլայնումն ու տեխնոլոգիական առաջընթացը, որոնք տնտեսական աճի հիմնական գործոններն են, անխուսափելիորեն անդրադառնում են երկրի արտաքին առևտրի վրա: Այս բաժնում անդրադառնում ենք արտաքին առևտրի և դրանով միջնորդավորված՝ երկրի բարեկեցության վրա տնտեսական աճի ազդեցությանը՝ առանձնաբար դիտարկելով ինչպես ռեսուրսների կուտակման, այնպես և տեխնոլոգիական առաջընթացի հետևանքները: Վերլուծությունը իրականացվում է ինչպես «փոքր», այնպես և «մեծ» երկրների համար: Նշենք, որ «փոքր» է համարվում այն երկիրը, որի արտաքին առևտրի ծավալները փոքր են այնքան, որ դրանց փոփոխությունը ապրանքների միջազգային հարաբերական գների վրա չի անդրադառնում: Այսինքն՝ փոքր երկրի համար առևտրի պայմանները տրված են: Ի տարբերություն՝ «մեծ» է համարվում այն երկիրը, որի առևտրի ծավալները այնչափ նշանակալի են, որ դրանց փոփոխությունը ներգործում է միջազգային հարաբերական գների վրա:

Իբրև տնտեսական աճի ազդեցության վերլուծման ելակետ դիտարկենք այն համեմատաբար պարզունակ տարբերակը, երբ երկու ապրանքների արտադրական հնարավորության միաչափ ընդլայնման արդյունքում առևտրի ծավալը ընդլայնվում է նույն չափով: Վերջինս անվանվում է *առևտրի չեզոք աճ*:

Գրաֆիկ 45-ում երկիրը սկզբնապես արտադրում է Q կետում և սպառում է C կետում: Այնուհետև՝ տնտեսական աճի արդյունքում երկրի արտադրական հնարավորությունների սահմանը տեղաշարժվում է աջ՝ այնպես, որ սկզբնակետից տարված ճառագայթների հետ հատման կետերում շոշափողների թեքման անկյունը մնում է անփոփոխ: Արդյունքում, արտադրության նոր Q^* կետում երկու ապրանքների թողարկումը ընդլայնվում է միևնույն համամասնությամբ, ինչ–որ արտադրական հնարավորությունների ընդլայնման համամասնությունն է, այսինքն՝ $OQ/OQ^* = OF/OF^*$: Արտադրության նման ընդլայնումը անվանենք *արտադրության չեզոք աճ*:

Գրաֆիկ 45: Արտադրության, սպառման և առևտրի չեզոք աճը



Արտադրելով Q^* կետում՝ երկիրը սպառում է C^* կետում: Վերջինս գտնվում է սկզբնակետից տարված, սպառման նախկին C կետով անցնող ճառագայթի վրա: Ընդ որում սպառման նախկին և ներկա կետերում անտարբերության կորերի շոշափողները միմյանց զուգահեռ են: Հետևաբար՝ ապրանքների սպառման ընդլայնման համամասնությունը հավասար է արտադրական հնարավորությունների ընդլայնման համամասնությանը, այսինքն՝ $OC/OC^* = OF/OF^*$, հետևաբար՝ առկա է *սպառման չեզոք աճ*: Բնականորեն՝ սպառման ընդլայնման համամասնությունը նույնն է, ինչ որ արտադրության ընդլայնման համամասնությունը՝ $OC/OC^* = OQ/OQ^*$:

Արտադրության ու սպառման չեզոք ընդլայնումների արդյունքում մահուդի արտահանումը և գինու ներմուծումը, կամ որ նույնն է՝ առևտուրը, նույնպես, ընդլայնվում են նույն համամասնությամբ՝ $sC/s^*C^* = sQ/s^*Q^* = OF/OF^*$, այսինքն՝ առկա է նաև *առևտրի չեզոք աճ*:

Ռիբչինսկու թեորեմ

Թեորեմում դիտարկվում է տնտեսության *ոչ* չեզոք աճի ազդեցությունը արտադրության վրա: Այսինքն, երբ ռեսուրսներն ընդլայնվում են անհամաչափ և դրանով պայմանավորված թողարկումը, նույնպես, աճում է ոչ համաչափ: Թեորեմի հեղինակը Թադեուշ Ռիբչինսկին է՝ ծագումով լեհ, անգլիացի տնտեսագետ: Թեորեմը հիմնված է հեղինակի՝ Լոնդոնի տնտեսագիտության դպրոցում գրած թեզի վրա, որի արդյունքները Ռիբչինսկին հրապարակեց մի քանի տարի անց՝ 1955թ–ին:

Թեորեմի ապացուցման համար դարձյալ օգտվենք Էջվորֆ–Բոուլի արկղից: Սկզբնապես առկա աշխատուժի և կապիտալի պաշարները նկարագրվում են $0_W M 0_C N$ արկղով (Գրաֆիկ 46), այսինքն աշխատուժի քանակը կազմում է $0_W M$, իսկ կապիտալի քանակը՝ $0_W N$: Ռեսուրսների գների հարաբերությունը կազմում է $(w/r)_1$, գինու արտադրությունում կապիտալ–աշխատուժ օպտիմալ հարաբերությունը տրված է $0_W E$ ճառագայթով, իսկ մահուդի արտադրությունում կապիտալ–աշխատուժ օպտիմալ հարաբերությունը՝ $0_C E$ ճառագայթով: Հետևաբար՝ արտադրության հավասարակշիռ քանակը նկարագրվում է E–կետով, ուր գինու թողարկումը կազմում է Q_W^1, իսկ մահուդի թողարկումը՝ Q_C^1: Նկատենք, որ գինու արտադրությունը աշխատատար է, քանի որ $0_W E$ ճառագայթի թեքման անկյունը փոքր է արկղի $0_W 0_C$ անկյունագծի թեքման անկյունից, որը արտահայտում է տնտեսությունում միջին կապիտալ–աշխատուժ հարաբերությունը, իսկ մահուդի արտադրությունը կապիտալատար է, քանի որ $0_C E$ ճառագայթի թեքման անկյունը մեծ է $0_C 0_W$ անկյունագծի թեքման անկյունից:

Այժմ ենթադրենք՝ աշխատուժի պաշարը ընդլայնվում է MM^* չափով և Էջվորֆ–Բոուլի արկղը կազմում է $0_W M^* 0_C^* N$: Մեզ հետաքրքրում է, թե ռեսուրսներից մեկի՝ տվյալ դեպքում աշխատուժի պաշարի ընդլայնումը ինչպես է անդրադառնում արտադրության վրա, երբ ապրանքների հարաբերական գինը մնում է անփոփոխ:

Ռեսուրսների հարաբերական գների հավասարեցման թեորեմի ապացուցումից հիշենք, որ ապրանքների հարաբերական գների ու ռեսուրսների հարաբերական գների միջև առկա է

Գրաֆիկ 46:
Աշխատուժի աճի ազդեցությունը արտադրության վրա Էջվորֆ–Բոուլի արկղում



միարժեք կապ, հետևաբար, երբ ապրանքների հարաբերական գինը չի փոխվում, ապա ռեսուրսների հարաբերական գինը, նույնպես, մնում է անփոփոխ: Իսկ ռեսուրսների հաստատուն հարաբերական գնի դեպքում, քանի որ արտադրության տեխնոլոգիան անփոփոխ է, ապա անփոփոխ են մնում նաև ապրանքների արտադրության ռեսուրսատարությունները: Իսկ քանի որ ռեսուրսների հարաբերական գինը և ռեսուրսատարությունները հաստատուն են, ապա նոր հավասարակշռության կետը հաստատվում է E^*–ում, որում $0_C^*E^*$–ն զուգահեռ է 0_CE–ին, իսկ $(w/r)_2$–ը զուգահեռ է $(w/r)_1$-ին:

Հավասարակշռության նոր կետում գինու արտադրությունը աճել է, քանի որ 0_WE^*-ը գերազանցում է 0_WE–ին, իսկ մահուդի արտադրությունը կրճատվել է, քանի որ $0_C^*E^*$–ը փոքր է 0_CE–ից: Մահուդի արտադրության կրճատման պատճառը նրանում է, որ աշխատատար գինու արտադրության ընդլայնումը պահանջում է նաև որոշ քանակի կապիտալ: Բայց, քանի որ կապիտալի պաշարը չի փոխվել, ապա լրացուցիչ կապիտալի աղբյուր կարող է լինել միայն կապիտալատար ապրանքի արտադրության կրճատումը: Այսինքն՝ կապիտալատար ապրանքի արտադրությունը պետք է կրճատվի, որպեսզի աճի աշխատատար ապրանքի արտադրությունը, երբ տեղի է ունեցել աշխատուժ ռեսուրսի ընդլայնում:

Այսպիսով, Ռիբչինսկու թեորեմը փաստում է՝ երբ *ապրանքների հարաբերական գները հաստատուն են, ապա ռեսուրսներից մեկի պաշարի ընդլայնումը պայմանավորում է այն ապրանքի արտադրության ընդլայնում, որում ինտենսիվորեն է օգտագործվում այդ ռեսուրսը և մյուս ապրանքի արտադրության կրճատում:*

Դիտարկենք Թեորեմի գործողությունը նաև արտադրական հնարավորությունների սահմանի օրինակով: Գրաֆիկ 47-ում E–ն, այնպես ինչպես Էջվորֆ–Բոուլի արկղում, արտահայտում է արտադրական համակցությունը նախքան աճը՝ Q_W^1, Q_C^1: Աշխատուժի պաշարի ընդլայնման հետևանքով արտադրական հնարավորությունների սահմանը ընդլայնվում է՝ ավելի հակված դեպի աշխատատար ապրանքը, որը մեր օրինակում գինին է: Հավասարակշռության նոր E^* մակարդակում ապրանքների հարաբերական գինը չի փոխվել՝ $(P_C/P_W)_2$–ը զուգահեռ է

Գրաֆիկ 47: Աշխատուժի աճի ազդեցությունը արտադրության վրա արտադրական հնարավորությունների սահմանի օրինակով



$(P_C/P_W)_1$–ին, և, սակայն, գինու արտադրությունը ընդլայնվել է, իսկ մահուդինը՝ կրճատվել: EE^* ուղիղը կոչվում է Ռիբչինսկու ուղիղ և արտահայտում է թողարկման փոփոխությունը, երբ հաստատուն հարաբերական գների դեպքում փոխվում է ռեսուրսներից մեկի պաշարը:

Արտաքին առևտրի վրա ազդեցությունը կախված է նրանից, թե երկիրը սկզբնապես որ ռեսուրսով է առատ: Եթե երկիրը ի սկզբանե առատ էր աշխատուժով, ապա արտահանում էր աշխատատար ապրանքը՝ գինին և ներմուծում էր կապիտալատար ապրանքը՝ մահուդը: Արդյունքում, եթե ներքին պահանջարկը չի փոխվում, ապա աշխատուժի ընդլայնումը կբերի արտահանման աճին, քանի որ, ըստ մեր ենթադրության, երկիրը փոքր է և հետևաբար առկա միջազգային գնով կարող է արտահանել գործնականում անսպառ քանակություն: Ուշագրավ է, որ տեղի կունենա նաև ներմուծման ընդլայնում, քանի որ երկրի կողմից ներմուծվող մահուդի ներքին արտադրությունը կրճատվում է:

Սակայն, եթե երկիրը սկզբնապես առատ էր կապիտալով, ապա գինին ներմուծվող, իսկ մահուդը՝ արտահանվող ապրանքն էր: Այդ դեպքում, երբ տեղի է ունենում աշխատուժի ընդլայնում, բայց այնքան, որ երկրի ռեսուրսառատությունը չի փոխվում, այսինքն՝ երկիրը շարունակում է առատ մնալ կապիտալով, ապա ներմուծման հետ մրցող գինու ներքին արտադրությունը ընդլայնվում է, հետևաբար՝ ներմուծումը կրճատվում է, միևնույն ժամանակ, սակայն, կրճատվում է նաև արտահանումը, քանի որ կրճատվել է մահուդի ներքին արտադրությունը:

Ի վերջո, եթե երկիրը սկզբնապես առատ էր կապիտալով և աշխատուժի ընդլայնումը այնքան նշանակալի է, որ երկիրը դառնում է աշխատուժով առատ երկիր, ապա գինի ներմուծելու փոխարեն երկիրը սկսում է այն արտահանել, իսկ մահուդ արտահանելու փոխարեն սկսում է այն ներմուծել: Վերջինս հատկապես բնութագրական է Ճապոնիայի և Նոր արդյունաբերական երկրների համար, որոնք 70-ական և 80–ական թվականներին, լինելով աշխատուժով առատ երկրներ, արտահանում էին աշխատատար ապրանքներ, օրինակ՝ տեքստիլ, սակայն, կապիտալի մեծածավալ ներդրումների շնորհիվ դարձան կապիտալով առատ երկրներ և տեքստիլ արտահանելու փոխարեն սկսեցին այն ներմուծել՝ փոխարենը արտահանելով կապիտալատար ապրանքներ, օրինակ՝ էլեկտրոնիկա:

Գրաֆիկ 48: Սուզման աճը



Սուզման աճ

Ռիբչինսկու թեորեմում ենթադրվում է, որ ապրանքների հարաբերական գինը անփոփոխ է, այսինքն՝ դիտարկվում է փոքր երկիր: Մեծ երկրի դեպքում, սակայն, արտահանման կամ ներմուծման ծավալների փոփոխությունը կբերի հարաբերական գների փոփոխության և, հետևաբար, ռեսուրսների ընդլայնման ազդեցությունը երկրի բարեկեցության վրա կպայմանավորվի նաև նրանով, թե որքանով են փոխվում առևտրի պայմանները: Ծայրահեղ դեպքում հնարավոր է, որ առևտրի պայմանները փոխվեն այնքան, որ երկրի բարեկեցությունը աճի արդյունքում նվազի և ոչ թե՝ բարելավվի: Այդ դեպքը Բհագվաթին 1955թ–ին անվանեց սուզման աճ, սկզբնական գաղափարը, սակայն, պատկանում է Էջվորֆին և հրապարակվել է 1894թ–ին:

Սուզման աճի գրաֆիկական ներկայացումը պատկերված է Գրաֆիկ 48-ում: Սկզբնապես երկիրը արտադրում է E կետում և սպառում է C կետում: Այնուհետև տնտեսական աճի հետևանքով առևտրի ծավալները այնչափ նշանակալի են աճում, որ պայմանավորում են առևտրի պայմանների զգալի փոփոխում, այնպես, որ երկիրը սկսում է արտադրել E^* կետում և սպառել C^* կետում: Նկատենք, որ սպառման նոր կետը գտնվում է ավելի ցածր անտարբերության կորի վրա, քան նախկինում: Բարեկեցության նման անկում կարող է տեղի ունենալ, օրինակ, երբ արտահանման և ներմուծման աճի հետևանքով արտահանման գինը նվազում է, իսկ ներմուծման գինը աճում է: